ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » _____ 2021թ. N----Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Նոր Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Փ. Բյուզանդի հ. 1/3, պետական գրանցման համարը՝ 286.120.03416):

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով:

3.Լուծարման հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ավարտել «Նոր Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ EՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Նոր Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միակ բաժնետերը հանդիսանում է Երևան համայնքը, որին 100%-ով պատկանում են Ընկերության բաժնետոմսերը:

Երևանի քաղաքապետարանի և «Շիմիձու» կորպորացիայի միջև կնքված «Նուբարաշենի աղբավայրում բիոգազի հավաքման աշխատանքների իրականացման մասին» 2009 թվականի մարտի 10-ի համաձայնագրից ելնելով, ըստ 07.10.2009թ-ի Հանձնման-ընդունման Ակտի, Նուբարաշենի թափոնակուտակիչում կառուցված բիոգազի հավաքման և այրման կառույցը (այսուհետ՝ Կառույց), «Շիմիձու» կորպորացիայի կողմից հանձնվել է Երևանի քաղաքապետարանին: Համաձայն Երևանի քաղաքապետարանի և Ընկերության միջև կնքված Սարքի շահագործման մասին 23.10.2009թ-ին կնքված համաձայնագրի, Կառույցի շահագործող /օպերատոր/ էր հանդիսանում Ընկերությունը, որը 2018 թվականից սկսած զբաղվում էր միայն Կառույցի շահագործման գործառույթներով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը այլևս չի զբաղվում Կառույցի շահագործմամբ և չի իրականացնում իր կանոնադրությամբ սահմանված գործունեություն՝ Ընկերության հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակահարմար:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Նոր Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության լուծարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Նոր Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության լուծարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումների կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Նոր Բարեկարգում» փակ բաժնետիրական ընկերության լուծարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ